



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ  
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11  
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498  
info@aybschool.am  
www.aybschool.am

## «Այբ» դպրոցի գործադիր տնօրեն

### ԱՆՁՆԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

#### ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների և աշխարհի վրա կարևոր ազդեցություն թողնելու նպատակին ձգտող, 21-րդ դարի նորարար ու արժեքներ դավանող մի դպրոցի (որպիսին «Այբ»-ն է) ղեկավարի թեկնածուն պետք է բավարարի ներքոբերյալ պահանջները:

#### Գլխավոր պահանջներ

1. Մագիստրոսի աստիճան՝ ճանաչված բարձրագույն կրթական հաստատությունից (նախընտրելի է մանկավարժական կամ կրթական ուղղվածության կրթությունը)
2. Հայերենի և անգլերենի իմացություն

#### Ցանկալի են՝

1. ռուսերեն հաղորդակցվելու կարողությունը,
2. մանկավարժական ոլորտի գիտական աստիճանը (թեկնածու, դոկտոր),
3. կառավարման կամ ադմինիստրատիվ ոլորտի որակավորումը (օր.՝ քիզնեսի կառավարման մագիստրոսի (MBA), կառավարման մագիստրոսի աստիճանները),
4. կրթական հաստատության գործադիր տնօրենի պաշտոնին առնչվող հետազա մասնագիտական զարգացմանն ուղղված գործունեությունը:

#### ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### Գլխավոր պահանջներ

1. Ռազմավարության և ռազմավարական կառավարման գիտելիքներ
2. Կազմակերպչական, ռազմավարական և գաղափարական արժեքահեն ու փոփոխությունների հանդեպ ճկուն առաջնորդության և լավ հաշվարկված մարտահրավերներ ստանձնելու կարողություն
3. Որևէ ավագ պաշտոնում մարդկանց և կազմակերպություններ կառավարելու փորձառություն
4. Կազմակերպությունում կառուցվածքային կազմավորումներ անելու, դերեր ու պատասխանատվություններ բաշխելու կարողություն, մեծ ծավալի աշխատանք պատվիրակելու ու կառավարելու, թիմային աշխատանքի որակը մշտադիտարկելու և բարելավելու հմտություններ
5. Քաջատեղյակություն ժամանակակից կրթական միտումներին և զարգացումներին
6. Նոր հմտություններ արագ ու հաջող ձեռք բերելու և մասնագիտական համատեքստում դրանք արդյունավետորեն կիրառելու կարողություն

7. Անձնակազմ հավաքագրելու, կառավարելու և զարգացնելու փորձառություն
8. Անձնակազմի աշխատանքի արդյունավետության վերանայում անցկացնելու և ծագող խնդիրները լուծելու փորձառություն
9. Ֆինանսական ոլորտի հիմնային գիտելիքներ՝ բյուջեն կարդալու և վերանայելու համար

### **Ցանկալի են՝**

1. հայաստանյան արդի կրթական իրողություններին և զարգացումներին քաջատեղյակությունը,
2. ուսումնական ծրագրի ներքին կառուցվածքի ըմբռնումը, դպրոցական հիմնական առարկաների ծրագրերի բովանդակության լավ իմացությունը,
3. արդյունավետ դասավանդման և ձևավորող գնահատման սկզբունքների վերաբերյալ գիտելիքը,
4. կառավարման մարմինների (օր.՝ հոգաբարձուների խորհրդի) հետ արդյունավետ աշխատանքի փաստերը,
5. դասավանդման որակի և աշակերտների առաջադիմության մշտադիտարկման ու գնահատման և ընդհանուր միտումներն ի հայտ բերելու նպատակով տվյալներ, չափորոշիչներ, արձագանքներ գործածելու կարողությունը,
6. կազմակերպության աշխատանքի արդյունավետության բարձրացման համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների վերաբերյալ գիտելիքը:

### **ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ**

#### **Գլխավոր պահանջներ**

1. Միջին մեծության կամ մեծ ուսումնական հաստատությունում ղեկավար բարձր պաշտոնի աշխատանք
2. Դասավանդման նախկին փորձի բացակայության դեպքում՝ դասավանդման պատրաստակամություն՝ համապատասխան հմտությունների ձեռքբերմամբ

### **Ցանկալի են՝**

1. ուսուցչի, դասախոսի կամ վերապատրաստող մասնագետի աշխատանքի փորձառությունը,
2. շահույթ չհետապնդող կազմակերպությունում որևէ ավագ պաշտոնում աշխատանքը,
3. ֆոնդահայթայթման հիմնական աշխատանքների փորձառությունը,
4. արդյունավետ հասարակական հարաբերությունների և ցանցերի հաստատման կարողությունը:

### **ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### **Գլխավոր պահանջներ**

1. Հավակնություն՝ «Այբ» դպրոցը ղեկավարելու այնպես, որ դառնա աշխարհի լավագույն ուսումնական հաստատություններից մեկը
2. Երկարատև նվիրում կրթությանը, ուսման հետաքրքիր ու լիարժեք միջավայրի ապահովմանը
3. Առաջնորդելու գերազանց հմտություններ, նախաձեռնելու, համոզելու և շահադրդելու, անձնական ազդեցություն ու ներգրավվածություն ապահովելու կարողություն
4. Հաղորդակցվելու, գրելու և լսելու գերազանց հմտություններ, ազդու և հետաքրքիր ելույթներ ունենալու կարողություն
5. Ստեղծարարություն, զգացական ինտելեկտ, արագ արձագանքելու կարողություն,

- ինքնաճանաչողություն, բացություն, նոր գաղափարներ ծնելու կամ ուրիշներից լավ գաղափարներ ընդունելու և իրականացնելու կարողություն
6. Ուժեղ բարոյական հատկանիշներ, արժեքներ և պարկեշտություն, սեփական օրինակով առաջնորդելու ունակություն, հզոր ինքնաշահադրում, սեփական սխալներն ընդունելու և դրանցից սովորելու կարողություն
7. Նվիրվածություն, պատրաստակամություն պաշտոնական աշխատանքի պահանջներից դուրս գործողություններ կատարելու՝ ըստ անհրաժեշտության
8. Հավակնոտ նպատակներ սահմանելու և դրանց հասնելու կարողություն, դեպի գործողություն և արդյունք նպատակաուղղվածություն, ժամկետների մեջ տեղավորվելու, ճկունություն ցուցաբերելու և ճնշման տակ հավասարակշռությունը չկորցնելու կարողություն
9. Համաշխարհային փորձառությունից լավագույնը վերցնելու և կիրառելու կարողություն՝ հարմարեցնելով տեղական ավանդույթներին և մշակութային համատեքստին
10. Հաստատամիտ, բայց արդար լինելու, դժվար որոշումներ կայացնելու և դրանց համար ամբողջական պատասխանատվություն ստանձնելու կարողություն
11. Փաստական տվյալներն ուսումնասիրելու և դրանց հիման վրա եզրակացություններ անելու կարողություն
12. Աշխատակիցների և աշակիցների նվիրվածությունը գնահատելու և գնահատանքը պատշաճորեն արտահայտելու կարողություն
13. Դպրոցի համար օգտակար ու արդյունավետ հարաբերություններ կառուցելու և պահպանելու կարողություն
14. Համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ կիրառական լավ գիտելիքներ, սեփական արդյունավետության բարձրացման համար դրանք կիրառելու կարողություն
15. Անձնական լավ կազմակերպվածություն ու ժամանակի հմուտ կառավարում
16. Հումորի լավ զգացում